Արմեն Մելիքբեկյան

Լրագրող, գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու

Ծնվել է 1980 թվականի մայիսի 10-ին

**1997-2002թթ.** սովորել է Երևանի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում: **2002-2005թթ**՝ նույն համալսարանի ասպիրանտուրայում:

**2005-2010թթ.** նույն համալսարանում դասավանդել է արտասահմանյան գրականություն:

**1999-2000թթ.** աշխատել է Հանրային հեռուստատեսությունում որպես մարզական լրագրող, **2001-2002թթ.**՝ dailyfootball.com և dailysoccer.com կայքերում որպես լրագրող և խմբագիր: **2003թ.** համահիմնադրել և խմբագրել է footballtoday.ru կայքը:

**2003-2013թթ.**՝ մարզական վերլուծաբան Հայաստանի հանրային հեռուստատեսությունում, **2013-2016թթ.**՝ «Արմենիա» հեռուստատեսությունում:

**2005-2008թթ.** աշխատել է Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայում՝ փոխտնօրենի պաշտոնում, **2006-2015թթ.** հանդիսացել է ՈՒԵՖԱ-ի Պատանեկան և սիրողական ու Մեդիա կոմիտեների անդամ:

**2006-2009թթ.** աշխատել է «Մեդիա Աթայլ» հոլդինգի՝ «90 րոպե», «Բիզնես կլաս» պարբերականներում, **2008-ին** համահիմնադրել է Tert.am կայքը, որի աշխատանքների համակարգողն է եղել մինչև **2009-ի** դեկտեմբեր:

**2010 թվականին** համահիմնադրել է «Անկախ լրագրողների ցանց» հասարակական կազմակերպությունը, որի կողմից գործարկվող Epress.am կայքում աշխատում է որպես լրագրող և խմբագիր: